ՆՈՐ-ԴԱՐ

№ 138 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Հինգշաբթի, 12 Օգոստոսի — 1893 — Հինգշաբթի, 12 Օգոստոսի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 138

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը.

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով.
Յայտարարութիւնների բառին 2 կոպ., րնկերների համար կրկնապատիկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Ռուս մամուլը հայերի մասին.
Քրոնիկոն.—Քաղ մէջ լոզանալը. Առողջապ. յանձնաժողով. որոշումը առաջիկայ զօրաժողովի մասին. Զրի թէյարան. Սուլթանի պատասխանը. Ախալցխա. Աչակերտների ընդունելութիւնները. Թիֆ. տպագոյ I գիմնազիոնում. Խոլերան Թիֆլիսում. Թիֆ. Քաղ. Վարկի. ընկերը. վարիչների ընտրութիւնը. Ստացած գրքեր, Խաչ. Աբ. օգտին ժողոված գումարի քանակութիւնը.
Խաչատուր Աբովեան.
Գրքակցութիւններ.—Նամակ Թիւրքիայից.—Երուսաղէմ. Արդահան.
Քաղաքական.—Ֆրանսիա.
Քաղաքական լուրեր.
Խառն լուրեր.
Հեռագիրներ.
Ֆելիէտօն.—Հայելի.
Տեղեկատու.—
Յայտարարութիւններ.

Թիֆլիս, 11 օգոստոսի, 1893 թ.

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Կէս դարից աւելի է, որ Կովկասի Հայերը կապուած են ռուս ժողովրդի հետ։ Բայց այդ երկար ժամանակամիջոցում ռուս ժողովուրդը, նոյն իսկ նրա ինտելիգենտ դասակարգը, շատ քիչ, եթէ չասենք ոչինչ, գաղափար չունին մեր լեզուի կեանքի, պատմութեան, գրականութեան և կրօնի մասին։

Այս կողմից եւրոպացիները, որ մեզնից այնքան հեռու են ընկած, անհամեմատ աւելի քարձր են կանգնած։ Իհարկէ այդ առթիւ եւրոպացուն զբաղեցնում է զուտ գիտական հետաքրքրութիւնը։ Եւ եթէ գիտական, պատմական հետազօտութիւններ ենք գտնում ռուս գրականութեան մէջ, այդ էլ շնորհիւ հայ գիտնականների՝ Էմինի, Պատկանեանի, որոնց գործն այսօր շարունակում է միայն երիտասարդ համակրելի գիտնական պ. Մարրը։ Բայց ոչ այնքան գիտնական հետաքրքրութիւնը, որքան կեանքի զանազան պայմանները, որոնք մեզ ռուս ժողովրդի հետ որոշ մերձաւոր յարաբերութիւնների մէջ են դրել, պէտք է ստիպէին գէթ այդ ժողովրդի առաջաւոր դասակարգին ծանօթանալ հայի հետ։ Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ ռուս մամուլն ազատ կըլինէր այն ափենփեղ մտքերից, որ շատ անգամ լոյս են տեսնում այնտեղ մեր կեանքի մէկ կամ միւս կողմի մասին։ Հեռուն չգնանք և ամենաթարմ օրինակը բերենք։ Մի հասարական ամսագիր՝ «Русское Обозрѣніе» յունիս ամսին մի յօդուածը էր հրատարակել Մխիթարեանների մասին։ Եւ ահա յօդուածագիրը պարոնն ում անկն է ուշադրութիւն է հրաւիրում մեր եկեղեցական-ծխական դպրոցների վրայ, ասելով որ այդ դպրոցները հասարակութեան մէջ զանազան քաղաքական մտքեր անցկացնելու միջոցներ են։ Պարոնը գտել է, որ Հայերն իրենց որդիներին ուղարկում են Մխիթարեանների դպրոցը, Վենետիկ. գրանք այնտեղ ուսուցիչների են պատրաստւում, համակւում են սեպարատիստ ձգտումներով և գալով մեր երկիրը, մտնում են մեր դպրոցները ուսուցչութեան պաշտօնով ու իրենց ստացած մտքերը հաղորդում են աշակերտներին։ Այ ձեզ երևակայութիւն, որի մասին կ'ոչնչանան հընդդիկ և արաբ հեքիաթներն էլ աչքի ընկնող ուժեղ առասպելները։ Խեղճ աշխատակիցը և խմբագրութիւնը որքան պիտի կարմրի այդ զրպարտութեան համար, երբ իմանայ, որ Մխիթարեանների դպրոցում բացի կրօնական, պատմական և լեզուագիտական գիտութիւններից ոչինչ չէ աւանդւում, և մեր բոլոր դպրոցներում գոնէ դեղապետի համար մի ուսուցիչ չէք գտնիլ, որ պապական Մխիթարեան դպրոցում լինէր սովորած։

Այս դրութեան մէջ աւելի քան մխիթարական է այն նոր հոսանքը, որ սկսւում է ռուս մամուլի մէջ։ Պ. պ. Վեսելովսկու և մեր աշխատակից Բերբերեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Հայ վիպագրողներ» (Армянскіе белетристи) գիրքը նպատակ ունի ռուս ինտելիգենտ դասակարգին ծանօթացնել մեր գրականութեան և կեանքի հետ։ Մայրաքաղաքի երեք թերթից մի քանիսը՝ մանաւանդ «Русскія Вѣдомости» օրաթերթը, «Русская Мысль», «Міръ Божій» ամսագրերը երբեմն հետաքրքիր յօդուածներով և թարգմանութիւններով նոյն նպատակին են ձգտում։ Այս օրերս Մոսկուայում լոյս տեսած «Армянскій вопросъ въ Турціи» (Հայոց խնդիրը Թիւրքիայում) գիրքը՝ աշխատութիւն Գր. Ա. Դիեվ նպատակ ունի ռուս ընթերցողներին գաղափար տալ այն խնդրի մասին, որով վաղուց մենակ Թիւրքիայի Հայերը և Պոլիսը չեն զբաղուած։

Օգոստոսի 1-ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 5 րուբլի 25 կոպ.։

ՔՐՈՆԻԿՈՆ

Վիեննայից մեր ներկայացուցիչը հեռագրում է օգոստոսի 11-ին։

Նորին Վեհափառութիւնը իր հետևորդներով երէկ օգոստոսի 10-ին Ալէքսանդրիայից Տրիեստ ուղևորուեց։

Նորին Վեհափառութեանը դիմաւորելու համար Տրիեստ պիտի մեկնեն վաղը՝ օգոստոսի 22-ին՝ Զաւրիկ Պօղոսվից և Վարդ Պատրիկեան տեղւոյս գաղթականութեան կողմից։

—

Քաղ մէջ լոզանալն, ինչպէս հաղորդեցինք, արգելուած է. բայց ժողովրդից շատերը դեռ չգիտեն այդ, ուստի անհամութիւններ են տեղի ունենում։ Անցեալներս մի մարդ, անգիտակ այդ կարգադրութեան, մտնում է ջուրը լոզանալու։ Դեռ գետի կէսը չհասած տեսնում է, որ քաղաքապահ ոստիկանը իր շորերը հաւաքում է ու գնում։ Խեղճը շտապով ափ է դուրս գալիս—բայց ոստիկանի հետքն էլ չէ գտնում։ Սալպուած Ադամայ զգեստով գնում է տուն, որ, բարեբաղդաբար, միայն մի քանի վողոց հեռու է լինում։ Խեղճը ճանապարհին մարդ պատահելիս, ամօթուց, ուրիշների բակերն է մտնելիս եղել, ինչպէս հաղորդում է Нов. Об.-ն։

—

Մնացականեան կամրջի մօտ Զրի Թէյարան է բացուած։ Հասարակ դասակարգն ուրախ է ի հարկէ Զրիաբար Թէյ ստանալու։

—

ԱԽԱԼՑԽԱ.—Այստեղ պատրաստւում են քաղաքի կողմից երկու պատշամաւոր ուղարկել Միխայլովո կայարանը դիմաւորելու Նորին Վեհափառութեանը։ Քաղաքիս հասարակ դասակարգը, որոնց հետ և կաթոլիկ հայերը, տարբ և կանայք, կարծելով թէ Վ.Հ. Կաթողիկոսն Ախալցխայով է անցնելու, անձկանօք սպասում են նրան տեսնել, օրհնութիւնն առնել ու ս. աջը համբուրել։

—

Ակնարկ մեր ընթերցողներին։ Ինչպէս գիտէք, Ալէքսանդրապոլի Ս. Աստուածածին եկեղեցին, որ 1887 թուին հրդեհից այրուեցաւ, վերանորոգուելով, նոր զարդարանքով և զանգակատունով, օծուեցաւ Ս. Խաչի տօնին։ Ներկայ էին Ս. Էջմիածնի Վեհափառ Հայրապետը, Ս. Աթոռի Ներկայացուցիչ Գերապ. Տ. Գէորգ Եպիսկոպոս Տէր-Մովսիսեան

—Անվնաս քաղցը վերջացաւ. չատ տեղերում սկսել են կալսել, բայց հացի գինը դեռ չէ իջել. Մեզանում էլ սովորականից չատ քանդ է ծախւում իւղը և պանիրը.—Սպասում ենք հունձքը բոլորովին վերջանայ, որ գուցէ այն ժամանակ հասարակ գասակարդը միջոց ունենայ էժան ապրելու։

—Վաղուց է, որ մեր քաղաքում հայերէն ներկայացում չէ եղել։ Մօտ մի ամիս է մալոռոսիական խումբը ռուսերէն ներկայացումներ է տալիս։ Լաւ կըլինէր, որ հայ թատերասէրներն էլ չարժուէին իրենց տեղերից։ Կարապետեան ուսումնարանում քիմ էլ ունինք այժմ։

—

Նորին Վեհափառութիւնը Թուրքիայի Սուլթանին մի շնորհակալական հեռագիր էր ուղարկել։ Այդ հեռագրին, ինչպէս «Արձագանք»-ի մէջ կարդում ենք, հետեւել պատասխանն է ստացուած սուլթանի Ա. քարտուղար Սուրիա փաչայի կողմից։

«Վեհ. Կայսեր մատուցի Ձեր Սրբութեան հեռագիրը, որով կըփութայիք դէպ յիշմիածին չմեկնած շնորհակալութիւն մատուցանել մինչև ցարդ Ձեր Վայելած կայսերական շնորհաց համար և Երուսաղէմ պէս Ս. Տեղեաց մէջ կրկնել Ձեր հանապազօրեայ մաղթանքները Նորին Կայսերական Վեհափառութեան համար։

Օգոստափառ Կայսեր հրամանաւ կը-հաղորդեմ և կ'ուտեմ Ձէ՛ այս եղանակաւ Ձեր արտայայտած հաւատարմութիւնը դոհունակութիւն պատճառեց և Ձէ՛ Ձեր մասին իւր բարձր համակրանքն կատարեալ է»։

—

Թիֆլիսի տղայոց I գիմնազիօնում ընդունելութիւնները լինելու են օգոստոսի 24-ին, 25-ին և 26-ին, իսկ լրացուցիչ քննութիւնները օգոստոսի 24—28-ը։

—

Առ 10 օգոստոսի Թիֆլիսի քաղաքային և երկաթուղու հիւանդանոցներում եղել է խոլերայից բռնուած 7 հիւանդ, մի հիւանդ նոր են բերել, մէկը վախճանուել է, այնպէս որ մնացել է 7 հիւանդ։

—

Անցեալ անգամ հաղորդել էինք, որ Պաստուխովը Արագածի գագաթն է բարձրացել։ Այժմ էլ «Кав.»-ին հեռագրում են, որ նա ուղը հոգու ուղեկցութեամբ օգոստոսի 10-ին Արարատի գլուխն է բարձրացել։

—

Թիֆլիսի Քաղաքային Վարկի ընկերութեան վարիչների ընտրութիւնը, «Нов. Об.»-ի ասելով, որոշուած է սեպտեմբերի մէջ կատարել։

—

Ստացանք Ա. «Արաքս»-ի հինգերորդ տարուայ ա. գիրքը. բովանդակութիւնը հարուստ, պատկերները չատ մաքուր։

բ. «Զորրորդ մոգը» Վան-դէյկի. Թէև չէ յիշած, բայց երևի թարգմանութիւն է. գինը 3 կ.։

գ. «Խունխոր» Ցակ. Ղազարեանցի. տանկահայերի կեանքից. գինը 60 կոպէկ։

Վերջին երկու գիրքը Հրատարակչական ընկերութեան հրատարակութիւն են №№ 67 և 69։

ԹԱՂԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

Մեծապատիւ խմբագիր.

Ուղարկում եմ ներփակեալ նամակովրս 3 ր., պատուական «Նոր-Դար»-իդ խմբագրութեանը և խնդրում եմ յատկացնէք, անմահ Թաղատուր Աբովեանին մահարձան կանգնեցնելուն և նրա «Վէրք-Հայաստան»-ին, ու անտիպ ձեռագիրները հրատարակելու համար հաւաքուող գումարի վրայ։

Եփրեմ Ա. Թուրլաթեանց.

1893 թ., յուլիսի 31-ն

Ասխաբադ։

—

Թաղատուր Աբովեանին արձան կանգնելու և նրա «Վէրք Հայաստանի»-ին հրատարակելու համար հաւաքուած ունէինք 967 ր. 60 կ., որի վրայ աւելացնելով Ասխաբադից պ. Առաքել Ոսկանեանի ուղարկած 30 րուբլին, Մոզդոկից պ. Ա. Շահիջանեանի ուղարկած 48 ր. 10 կոպէկը և Թիֆլիսում պ. Կ. Շիրինեանի հաւաքած 15 րուբլին, առայժմ կ'ունենանք ընդամենը 1060 ր. 70 կոպէկ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀՐԱՒԻՐԱԿՆԵՐԸ ԵՒ ՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

—

ԵՐՈՒՍԱՂԷՄ, 24 յուլիսի.—Կաթողիկոսական հրաւիրակը ամսոյս 13-ին Պոլսէն մեկնելով, 18-ին Աղէքսանդրիա հասան, ուղիղ 22-ին, առաւօտեան ժամը 10-ին, եգիպտական չոգենաւով մեկնելով, հետեւեալ օրը այսինքն երէկ կէս օրին Յոպպէ հասան և 2 ժամ հանգըստանալէ յետոյ, անկից ալ մեկնելով, երեկոյեան ժամը 6-ին հոս տեղի կայարանը հասան, ուր գիրենք և զգեր. Սիմէօն եպիսկոպոս Սեֆերեան (Երուսաղէմի պատրիարքական փոխանորդն ի Կ. Պոլիս) դիմաւորելու համար մի եպիսկոպոս և մէկ քանի վարդապետներ գացած էին։ Կէս ժամ յետոյ ամենքն միասին ս. Յակովբայ վանքը հասան։ Հոն Գասպարեան և Սեդրակեան սրբազաններու և իրենց ընկեր երկու վարդապետաց չուրջառ տալով՝ եկեղեցւոյ գաւթէն չարականներ երգելով այտուղի միաբանութիւնը, գիրենք առաջնորդեց յուխտ ս. Գլխատրի։

Ձամբորդք մէկ քիչ հանգիստ առնելէ յետոյ, ամեն. պատրիարք Վեհապետեան սրբազանին ներկայանալու պատիւը ունեցան. և ժամը 8-ին ի ճաշ հրաւիրուեցան, ընկերութեամբ մի քանի միաբան եպիսկոպոսաց և վարդապետաց և աշխարհականաց, (որք են՝ Թորոսեան, Մաքսուտեան, Խորէն Խրիմեան և այլք)։

Իսկ այս առաւօտ ժամը 9-ին Երուսաղէմի բոլոր կղերականք պատրիարքարան ժողովուելով, ուր էին նաև հրաւիրակը, կ'ապահէին Նորին Վեհափառութիւն Սրբազնագոյն Կաթողիկոսին և երբ եկաւ բազմիլ ի գլուխ բոլոր ներկայից, հրաւիրակը իրեն մատուցին ս. խաչն ու գաւազանն ըստ սովորութեան էջմիածնի։ Պատշաճաւոր չարականները երգելէ յետոյ, նախ Սեդրակեան և ապա Գասպարեան եպիսկոպոսք համառօտակի ճառեր խօսեցան օրուան, գործին և իրենց յանձնած պաշտօնի նկատմամբ, որոց պատասխանեց Նորին Վեհ. Կաթողիկոսը։ Ապա բոլոր ներկայք Նորին Վեհափառութեան ս. աջը համբուրելէ յետոյ, քաշուեցան։ Ահա այսպէս վերջացաւ խաչի և գաւազանի մատուցման արարողութիւնը։

Նորին Վեհափառութիւնը որոշեց, օգոստ. 5-ին այս տեղէն մեկնել և նոյն աւուր առաւօտեան չոգենաւով դէպի Թրիէսթ երթալ Աղէքսանդրիոյ ճանապարհով, որով ըսել է թէ օգոս. 13-ին երեկոյ Թրիէսթ կըհասնի։

Յոպպէի ժողովրդէն առ ժամանակ հոս գտնուող պ. Սրապիօն Մուրատեան պատիւ պիտի ունենայ ընկերանալ Ն. Վեհափառութեան մինչև էջմիածին իբր թարգման, վասն զի պ. Մուրատեանն դիտէ չատ մը եւրոպական լեզուներ։

***

ԱՐԻԱՀԱՆ, 26 յուլիսի.—Մեր հասարակութեան գլխաւոր վէրքերից մէկը պէտք է համարել ճանճի նման չատացող այն անբարոյական տները, որտեղ արդի երիտասարդութիւնը թողնում է իւր առողջութիւնը, իւր ոյժը և կարողութիւնը, փչանում է ֆիզիքապէս և բարոյապէս։ Դեռ ևս կարելի էր ստիպուած հաշտուել այդ ամենի հետ, եթէ այդ տները գոնէ չաբաթը երկու անգամ ենթարկուէին ամենախիստ բժշկական քննութեան, բայց տարաբաղդաբար այդ քննութիւնը չատ թոյլ է նա մանաւանդ գաւառներում և գիւղաքաղաքներում։ Արդեօք չպէտք է այս տներին վերագրել այն, որ արդի երիտասարդութիւնը խոյս է տալիս ամուսնութիւնից և դեռ չմտած երիտասարդական ծաղիկ հասակը, ծերանում է, և երբ սառչում է երիտասարդական տաք արիւնը և տեղի տալիս ծերութեան, այն ժամանակ միայն մտածում է ամուսնութեան վրայ, ոչ թէ կամենալով վերջ տալ իւր անբարոյական կեանքին, կամ ընտանեսիրութեան էջմիածնի։ Պատշաճաւոր չարականները երգելէ յետոյ, նախ Սեդրակեան և ապա Գասպարեան եպիսկոպոսք համառօտակի ճառեր խօսեցան օրուան, գործին և իրենց յանձնած պաշտօնի նկատմամբ, որոց պատասխանեց Նորին Վեհ. Կաթողիկոսը։ Ապա բոլոր ներկայք Նորին Վեհափառութեան ս. աջը համբուրելէ յետոյ, քաշուեցան։ Ահա այսպէս վերջացաւ խաչի և գաւազանի մատուցման արարողութիւնը։

Նորին Վեհափառութիւնը որոշեց, օգոստ. 5-ին այս տեղէն մեկնել և նոյն աւուր առաւօտեան չոգենաւով դէպի Թրիէսթ երթալ Աղէքսանդրիոյ ճանապարհով, որով ըսել է թէ օգոս. 13-ին երեկոյ Թրիէսթ կըհասնի։

Յոպպէի ժողովրդէն առ ժամանակ հոս գտնուող պ. Սրապիօն Մուրատեան պատիւ պիտի ունենայ ընկերանալ Ն. Վեհափառութեան մինչև էջմիածին իբր թարգման, վասն զի պ. Մուրատեանն դիտէ չատ մը եւրոպական լեզուներ։

***

ԱՐԻԱՀԱՆ, 26 յուլիսի.—Մեր հասարակութեան գլխաւոր վէրքերից մէկը պէտք է համարել ճանճի նման չատացող այն անբարոյական տները, որտեղ արդի երիտասարդութիւնը թողնում է իւր առողջութիւնը, իւր ոյժը և կարողութիւնը, փչանում է ֆիզիքապէս և բարոյապէս։ Դեռ ևս կարելի էր ստիպուած հաշտուել այդ ամենի հետ, եթէ այդ տները գոնէ չաբաթը երկու անգամ ենթարկուէին ամենախիստ բժշկական քննութեան, բայց տարաբաղդաբար այդ քննութիւնը չատ թոյլ է նա մանաւանդ գաւառներում և գիւղաքաղաքներում։ Արդեօք չպէտք է այս տներին վերագրել այն, որ արդի երիտասարդութիւնը խոյս է տալիս ամուսնութիւնից և դեռ չմտած երիտասարդական ծաղիկ հասակը, ծերանում է, և երբ սառչում է երիտասարդական տաք արիւնը և տեղի տալիս ծերութեան, այն ժամանակ միայն մտածում է ամուսնութեան վրայ, ոչ թէ կամենալով վերջ տալ իւր անբարոյական կեանքին, կամ ընտանեսիրական քաղցը կեանք վարելու կարիքից ստիպուած—ոչ. այլ որպէս զի իւր վերջին օրերին ունենայ մէկը, որ իրեն ծառայէ, և այդպիսիներն ամուսնանում են միամիտ, անմեղ մատաղահաս օրիորդների հետ, անբաղդացնելով իրենց հետ նրանց ևս, իսկ մեր արդի գորովագութ ծնողները հօ պատրաստ են առանց մտածելու ու գնահատելու երիտասարդի արժանաւորութիւնը, ամենայն հեշտութեամբ իրենց ծանր բեռից —աղջկանից ազատուելու։ Մի՞թէ այս հանգամանքը չէ պատճառը, որ մենք ականատես ենք լինում աւանդական հայ սուրբ օջախի պատիւը ոտքի տակ տալուն...։

Դեռ այս բաւական չէ, հայը, որ պատրերէ ի վեր յայտնի է որպէս աշխատող, աղնիւ, իւր ճակատի քրտինքով ապրող մարդ, տարաբաղդաբար վերջին ժամանակներս սկսել է պարապել մի այնպիսի առևտուրով, որը միայն անվանականութիւն է ամենաստոր արարածներին, որից խորշում է ամեն մի ազնիւ և իւր պատիւը ճանաչող մարդ։ Այդ, եթէ կարելի է այսպէս ասել, կենդանի ապրանքի առևտուրն է... բայց որ ամենագլխաւորն ու ցաւալին է, հայ կինը մի կողմ թողած իւր ընդհանուր աշխարհին յայտնի խոհեմութիւնը և պարկեշտութիւնը, պարապում է այդ վաճառականութեամբ՝ սեփականացնելով իրեն այդ արհեստի յատուկ ամենակեղտոտ միջոցները։ Թէև ճշմարիտ է, այդպիսի հայ կանանց թիւը չատ քիչ է, բայց այդ ևս բաւական է որ չօշափուի հայ կնոջ բարի անունը։ Այս դառն մտածմունքներին պատճառ տրուեց վերջին ժամանակներս Արդահանում տեղի ունեցած մի քաոմնկիլ դէպք. գոնը Թիֆլիսի պատուաւոր ընտանիքից է. ահա համառօտ եղելութիւնը։

Մօտաւորապէս 10 ամիս առաջ Աղէքսանդրապոլից Թիֆլիս է գնում մի անբարոյական տան կառավարիչ՝ մի հայ կին Կատարինէ անունով՝ նոր «տղայ» ձեռք բերելու։ Այդ բարոյապէս փչացած կինը չան հոտառութեամբ տեղեկանում է, որ N փողոցում № 48 ապրում է մի մատաղահաս կին, որի

բազի մէջ խաբուելով՝ այն օրուանից մինչ այսօր ինքն իրեն ճարտարապետ է համարում, ինչպէս՝ կօշկակար Հանսը «Կախարդուած պրինց»-ի մէջ իրեն մինչև այսօր էլ դուցէ պրինց է ճանաչում։ Երկուսի մէջի զանազանութիւնն այն է սակայն, որ Հանսը չրջապատողներին չկարողացաւ խաբել և ինքը ծաղր ու ծանակի առարկայ դարձաւ, իսկ սա խաբեց և իրրև ճարտարապետ՝ հրաւիրուել է զեկավարելու միաբանից համար չինուող մեծածախ չինութեան գործերը։

—

Ջորջտէ քաղաքի Թղթակիցը գրում է.—Փոխուել, նորոգուել ու տակաւին փոխուում, նորոգուում են մեր աստուածապահ քաղաքի եկ. ծխ. ուսումնարանների աւագ ուսուցիչներն իրենց կըրտսեր ու կրտսերագոյն ուսուցիչներով և ուսուցչուհիներով։ Նախկին ուղտերին ու ջայլամներին (խոստովանւում եմ, որ անշնորհք համեմատութիւն է արածս) փոխանակել են ներկայ իծուկներն ու հաւերը։ Այդ իսկ է պատճառը կարծես, որ Թեմական տեսուչն էլ մի մեծ ուղտի կարևորութիւնն զգալով, այս վերջնոց վերայ գլուխ ու պետ և իրեն օգնականի պաշտօնով ուղում է կարգել մեր Նախկին, այժմ Թէև ծերացած, բայց աժդահա ուղտերից մէկին—աղա Ղազարեանցին, Թէև մեր գիժ իծուկներին խելքի բերելը ներկայ ազատանմտութեան դարում չատ էլ հեշտ չէ։ Վաղուան առածի պէս դրանք կամուրջ ձգած գերանի վրայով անցնելիս՝ միմեանց հերթ երբէք չեն ուղում տալ, այլ բարակ ոտները գերանին դէմ տալով՝ սկսում են կռուել ու գլորւում են ցած (միմեանց հերթ տուող համեատ իծուկները չատ քիչ են, որոնք փոքր փոքր հեռանում են)։

Վերոյիշեալ եղելութեան յար և նման մի երևոյթ էլ Աղէքսանդրապոլն ունի, այստեղ էլ ուսուցիչները, երևի չատութիւնից, քիչ է մնում որ իրար քիթ ու պռունկ կրծեն, եթէ դեռ չեն կրծել, իմարկէ։

Լսում ենք, որ այդ անհաչտ ուսուցիչներից ոմանց մէջ վերջապէս սէր և միաբանութիւն է հաստատուել և միաձայն վճռել են ընկերական մի խանութ բանալ, բայց դարձեալ ամեն մէկը նրանցից ուսումնարանի մէջ նորից կռուելու իրաւունքն իրեն վերապահելով։ Ահա այս վերջին մտադրութեան առաջն առնելու ցանկութեամբ է, որ հ. Թեմ. տեսուչն որոշեց ու հրաւիրեց պ. Ղ. Աղայեանցին իրեն օգնելու ու զեկավարելու քաղաքի բոլոր աւագ ուսուցիչներին։ Եթէ այս վերջինը եկաւ՝ յայնժամ մնաս բարեաւ հայոց այբուբենի չարաբաղդ Ս. տառ. Տէր Ղևոնդեանց ու Մանդինեանց դուք էլ մնաս բարեաւ. ձեր Մայրենի լեզուով ու Նահապետական աչխարհով, ս.-ի Թադատուրեան ժամանակը հասաւ մեր ուսումնարանների համար։

—

Հինգերորդ քաղաքից ահա Թէ ինչ են գրում.—Աչքներս լոյսլոյսլոյսլոյսաստ... մեր քաղաքի հոգ. կառավարութեան անդամներն ու քարտուղարը փոխուել են։

Է, ինչ հասկացաք այդպիսի անմիտ Թղթակցութիւնից, Աչքսանդրապոլի հոգ. կառավարութեան անդամներն ու քարտուղարն էլ են փոխուել։ Բայց որովհետև նրանց համար պատրաստ են, որ դեռ մեղրահատի պէս իրենց մատները լիզել չեն սովորել, ուստի չարժէ դրանց մասին խօսելը։

—

Վեցերորդ քաղաքից հետեւալն են գրում.—Մեր վանքական ընկերութեան անդամները իրենք են ուզում փոխուել, հեռանալ, բայց չեն Թողնում, հաչիւ են պահանջում. եթէ վերջն այդպէս էր լինելու՝ էլ ուր էին անդամները նեղութիւն քաչում ու վանքում ուսումնարանի չէնք ու գոմանոց չինում. չէ որ բոլոր հաչիւները նրանց մէջ են պարունակւում, գուցէ այդ է պատճառը, որ հաչուեմատեաններն իրրև անպէտք բան՝ կատա գետն են ձգուել, ուստի բարին էն է՝ որ այդ մարդոց օձիքը բաց Թողնեն, ինչպէս ամբողջ հայ ազգն էլ ակամայից պիտի բաց Թողնի այն մարդոց քղանցքը, որոնք անհաչիւ վատնել են իւր նուիրած կոպէկներն անպէտք չինութիւններ կատուցանելով, որ ինչ է փառաւորեն իրենց անունը մի բարեգործ արձանագրութեամբ, Թէ այդ տգեղ ու անպէտք չինութիւնների հեղինակն իրենք են։ Լաւ է, որ հեղինակութիւնն իրենք իրենց վրայ են առնում, Թէ չէ կըզտնուէին մարդիկ, որ այդ պատն էլ ի տարապարտուց ուրիշներին կըվերագրէին։

—

Մեր Հաւիճոյ վանից Հոգաբարձութիւնից էլ են հաչիւ պահանջել. չ'գիտեմ այս քանի՞ երորդ անգամն է, բայց հաստատ է, որ խօսքը պահանջելը չէ, այլ յաջողել տանելը։

—

Նոյեմբերտէ քաղաքի Հայելիի Թղթակիցը գրում է.—Ձեզ և մեզ մեծ աւետիք՝ չատ դէս ու դէն յինկանք՝ հապիւ հազ գտանք մի օրինաւոր գանձապահ մեր օրիորդաց ուսումնարանի համար։ Թէև ինքը հնամաչ ու ծեր ոտքից սկսած մինչև գլուխը, բայց կարճ միջոցի մէջ նորոգուեց ու քաղցցաւ գլխից սկսած մինչև ոտները։ Խնդրում ենք մի հրաւանդ, որովհետև ինչպէս երևում է՝ հաչուեվարութեան մէջ փոքր ինչ խառնուել է, Թէև իւր կենսագրութիւնից երևում է, որ դա չատ տարիներ առաջ էլ եղել է գանձապահ։

—

Հրաւանդ տալ չենք կարող, բայց դոյն օրինակ մի դէպք կը պատմենք Աչքսանդրապոլի նորոգոյն պատմութիւնից, որ դուցէ Թէ օգտակար լինի Թէ Թղթակցին և Թէ իւր քաղաքին։

Նորոգուել, երիտասարդացել է մեր հին հոգաբարձու պ. Ա. Ն. վերակոչուելով ի պաշտօն հոգաբարձու գանձապահութեան Ա. դպրոցի։ Այս պարոնի պաշտօնը երևի չատ ուշ են նորոգել ընտրողները, որ խեղճը մոռացել է գանձապահութեան մատենադարանական ճչտ եղանակը, որի չնորհիւ նրա վարած մատենում սպրդել են հետեւեալ սխալների նման անուշադրութիւնից յառաջ եկած անմեղ վրիպակները, օրինակ 1, ծախք է գրել Թեմ. տեսչին տուած ճանապարհածախք 155 րուբլի, մինչդեռ նրան ոչ մի կոպէկ տուած չէ, այլ այդ գումարն Թեմ. տեսուչն ստացել է ընդհանուր գանձապահ Մ. Կ., որի մատենում և ստացման մասին ստորագրել է. 2, ծախք է գրել ծառայի երկամսեայ ռոճիկը, մինչդեռ նրան կոպէկ տուած չէ և տողերս գրած ժամանակ չէր էլ ուղում տալ. 3, նախահաչուից դուրս՝ աւելի ծախք է արել Թէ որդեգրուհեաց և Թէ փայտի համար և այլն և այլն։ Բարեբաղդաբար պարոնը մուտքի մէջ ոչ մի սխալ չէ գործել անուշադրութեամբ աւելի մուտք գրելով՝ քան Թէ ունեցել է իսկապէս, Թէ չէ, խեղճի վնասը մի պիտի տար։

—

Ո-ցերորդ քաղաքից գրում են.—Փոխուել է մեր մեծ եկեղեցու հիւսն կան քաղցը կեանք վարելու կարիքից ստիպուած—ոչ. այլ որպէս զի իւր վերջին օրերին ունենայ մէկը, որ իրեն ծառայէ, և այդպիսիներն ամուսնանում են միամիտ, անմեղ մատաղահաս օրիորդների հետ, անբաղդացնելով իրենց հետ նրանց ևս, իսկ մեր արդի գորովագութ ծնողները հօ պատրաստ են առանց մտածելու ու գնահատելու երիտասարդի արժանաւորութիւնը, ամենայն հեշտութեամբ իրենց ծանր բեռից —աղջկանից ազատուելու։ Մի՞թէ այս հանգամանքը չէ պատճառը, որ մենք ականատես ենք լինում աւանդական հայ սուրբ օջախի պատիւը ոտքի տակ տալուն...։

Դեռ այս բաւական չէ, հայը, որ պատրերէ ի վեր յայտնի է որպէս աշխատող, աղնիւ, իւր ճակատի քրտինքով ապրող մարդ, տարաբաղդաբար վերջին ժամանակներս սկսել է պարապել մի այնպիսի առևտուրով, որը միայն անվանականութիւն է ամենաստոր արարածներին, որից խորշում է ամեն մի ազնիւ և իւր պատիւը ճանաչող մարդ։ Այդ, եթէ կարելի է այսպէս ասել, կենդանի ապրանքի առևտուրն է... բայց որ ամենագլխաւորն ու ցաւալին է, հայ կինը մի կողմ թողած իւր ընդհանուր աչխարհին յայտնի խոհեմութիւնը և պարկեշտութիւնը, պարապում է այդ վաճառականութեամբ՝ սեփականացնելով իրեն այդ արհեստի յատուկ ամենակեղտոտ միջոցները։ Թէև ճշմարիտ է, այդպիսի հայ կանանց թիւը չատ քիչ է, բայց այդ ևս բաւական է որ չօշափուի հայ կնոջ բարի անունը։ Այս դառն մտածմունքներին պատճառ տրուեց վերջին ժամանակներս Արդահանում տեղի ունեցած մի քաոմնկիլ դէպք. գոնը Թիֆլիսի պատուաւոր ընտանիքից է. ահա համառօտ եղելութիւնը։

Մօտաւորապէս 10 ամիս առաջ Աղէքսանդրապոլից Թիֆլիս է գնում մի անբարոյական տան կառավարիչ՝ մի հայ կին Կատարինէ անունով՝ նոր «տղայ» ձեռք բերելու։ Այդ բարոյապէս փչացած կինը չան հոտառութեամբ տեղեկանում է, որ N փողոցում № 48 ապրում է մի մատաղահաս կին, որի

երեսփոխան Ս. Դ. Հայ ազգի բարեգործների մէջ նչանաւոր տեղ են բռնում ժողովրդի ստորին խաւերից յառաջ եկած անզրագէտ անձինք. սրանց կարգին է պատկանում այդ երեսփոխանը, որ իւր ծախքով մի չատրուանապարկ աղբիւր է կախել իւր աւագանով՝ ուսւաց գերեզմանատան մէջ։ Սա 9 տարի էր՝ ինչ երեսփոխան էր, իւր բարեկամները ուղում էին 10 տարին լրացած տեսնել, որ 10 դրա ամենայր տօնէին, սակայն ինքը չ'կամեցաւ։ Համեստութիւնն այն յատկութիւններից չէ, որ չատերը օժտուած լինին նրանով։ Դրա հակառակ յատկութեամբ - անհամեստութեամբ է, որ զինուած են չատ չատերը մեզանում, օրինակ՝ հենց այդ երեսփոխանի հաչուետեները, որ խեղճի վրան 4000 րուբլի պարտք բարձին և ուղարկեցին հոգևոր իշխանութեան։ Այդ բաւական չէ, կան մարդիկ, որ այդ պարտքի մոռացութիւնն էլ իրրև մահացու հանցանք՝ իրեն երեսին են տալիս. այսպէս՝ ինչու, ասում են, եկեղեցու յատակը տախտակամածելիս՝ չատպելուց մոռացել և տախտակների տակն է Թողել նա նախկին քարեայ սալայատակը, արժողութեամբ մօտ 700 րուբլի, որի քարիւրով, ասում են բամբասաբերները, կըսալայատակուէր Թէ եղեկեցու և Թէ ուսումնարանի գաւիթը։ Էլ չեն իմանում, որ չիք չարիք առանց բարեաց, չէ՞ որ նորընտիր երիսփոխանին էլ գործ բացուեց, նրան էլ կըմնայ փայտէ յատակը քանդել, քարէ սալերը հանել և տալ տախտակամածել, սակայն զղուչացնում ենք, որ նորից տախտակամածելիս հին երիսփոխի պէս մոռացմամբ ինքը չ'չինէ առանց աճուրդի իւրաքանչիւր քառ. սաժէնին 8 ր. ծախք գրելով, մինչդեռ 5-ով էլ չինողներ կան։

մարդը մեղադրելով մարդասպանութեան մէջ, աքսոր է ուղարկուած և թէ կինը իւր ձեռքի աշխատանքով դերձակութեամբ է հայթհայթում իւր օրական պարէնը։ Նա առանց երկար մտածելու կազմում է իւր ծրարիրը և ահա մի առաւօտ կառքը կանգնում է այդ անբաղդ կնոջ տան առջև։ Նա զուգուած, կոկուած մտնում է ներս, պատուէր է տալիս մի քանի կտոր շորեր կարելու և խօսակցութեան մէջ մանրամասն տեղեկանում է կնոջ ազգուսի և կեանքի մասին, մի քանի կաթիլ արտասուք աչքերին, կեղծ ցաւակցութեամբ մասնակից է լինում խեղճ և միամիտ կնոջ ցաւերին և որպէս թէ կամենալով օգնել Նրան, իրեն ցոյց է տալիս որպէս մտերիմ բարեկամ Ալէքսանդրապոլի մի նշանաւոր անձի և յայտնում է, որ յանձնարարուած է իրեն մի պարկեշտ կին կամ օրիորդ գտնել նրա որդոց համար որպէս դայեակ, և խորհուրդ է տալիս օգտուելու այդ հանգամանքից։ Խեղճ կինը հալած իւղի տեղ ընդունելով Կատարինէի խօսքերը և խորհրդակցելով իւր մօրաքրոջ հետ, տալիս է իւր համաձայնութիւնը և մի քանի օրից յետոյ Կատարինէն իւր որսի հետ վերադառնում է Ալէքսանդրապոլ և իջևանում... անբարոյականութեան տանը։ Առաջի օրից զոհը տեսնում է այն քակարդը, ուր ընկել է, բայց ազատուելու ոչ մի միջոց չունենալով, փակւում է իւր սենեակում... Բայց... վերջ ի վերջոյ ընկնում է։

Անցնում է մի քանի ամիս. Կատարինէն տեսնում է, որ իւր զոհը չէ հաշտւում իւր դրութեան հետ, ուստի տալիս է նրան մի բարոյապէս փչացած երիտասարդի, որն այդ անբաղդ կնոջը համոզելով, թէ ցանկանում նրա հետ ամուսնանալ և թէ Ալէքսանդրապոլում այդ անյարմար է, բերում է Կաղզուան և պահում իւր մօտ—որպէս... կենդանի ապրանք։ Անցնում է մի քանի ամիս էլ և երիտասարդը խեղճ կնկան ծախում է Արդահանի անբարոյականութեան տան տէր մի հայի 70 րուբլով։ Նա խաբում է խեղճ կնոջը, թէ Արդահանն ամենայարմար տեղն է ամուսնանալու համար, բերում է այստեղ և ստանալով իրեն հասանելի գումարը, անհետանում է թողնելով խեղճ կնոջ իւր նոր գահճի ձեռքը։ Թշուառ կինը տեսնելով, որ կրկին խաբուեց, երկրորդ օրը երևոյթեան մի երիտասարդի հետ փախչում է, իսկ երրորդ օրը տեղական կառավարութեան պատմում եղելութիւնը և խնդրում օգնութիւն և պաշտպանութիւն. տեղական կառավարութիւնը կնոջը յանձնում է տեղիս բարեկ. Ղևոնդ քահանայ Մարգարեանցին իւր տանը տեղաւորելու՝ մինչև կարգադրութիւն լինի հայրենիք ուղարկելու։

Այս ամենից յետոյ մի հարց ինքն իրեն առաջ է գալիս. ո՞րքան այդպիսի անմեղներ զանազան կանանց չնորհիւ փչանում են այդ տներում՝ չունենալով ոչ մի միջոց ազատուելու....Մեր վերջին խօսքն է լինելու զգուշացնել մանկահասակ կանաց և ծնողներին զգուշանալ Կատարինէի նման ճիւաղներից և նրանց կեղծ կարեկցութիւնից. մեզ յայտնի չէ ինչպէս է վերջանալու վերոյիշեալ դէպքի քննութիւնը, բայց մեր ցանկութիւնն է, որ Կատարինէն և իւր համախոհները ստանային իրենց արժանի պատիժը։

Արդահանցի.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

·ՖՐԱՆՍԻԱ — Ֆրանսիայում արդէն պատգամաւորների ընտրութիւնը կատարուել է. մնում են կրկնաքուէարկութիւնները, որոնք կրկատարուին օգոստոսի 22-ին։ Այդ օրը վերջնապէս կ'որոշուի, թէ արդեօք կառավարութիւնը պիտի կարողանայ մի այնպիսի մեծամասնութիւն կազմել պատգամաւորների ժողովում, որ խաղալիք չդառնայ այս կամ այն ծայրայեղ կուսակցութեան ձեռին, ինչպէս էր մինչև այժմ։ Ֆրանսիան իւր վերջին մի քանի տասնեակ տարուայ կառավարութիւնների միջոցին այնքան բազմադիմի վարչական եղանակների ու զանազան ուղղութեան մինիստրութեան ձեռք անցաւ, այնքան տարուբերուեց քաղաքական կեանքի մէջ, որ նախկին փայլը բոլորովին կորցրեց։ Արդէն Ֆրանսիական մինիստրութիւնների արագապէս իրար յաջորդելը առակի կարգ է անցած։ Այդ դրութիւնը Ֆրանսիային վնասում էր նախ արտաքին քաղաքականութեան մէջ՝ հաստատուն դաշնակիցներ ունենալու չափ վստահութիւն ներշնչելու անկարող գտնուելով, և նեղքին գործերով զբաղուելու, լուրջ բարեփոխութիւնների ընդունակ աշխատանքի հնարաւորութիւն չտեսնելով։ Պանամայի և նրան յաջորդող մի քանի նշանաւոր գործեր, որոնք ժողովրդին գայթակղեցնելով կարող էին նրա տրամադրութիւնը հակել հասարակապետութեան համար աննպաստ կողմ, բարեբաղդաբար Սիամի վայլուն յաղթութեամբ նահանգան և ֆրանսիական ներկայ կառավարութեանը միջոց տուին պարզ երեսով ժողովրդին հրաւէր կարդալու, որ ընտրէ աւելի չափաւոր հասարակապետականներ։ Մեր այսօրուայ հրատարակած հեռագրից երևում է, որ ֆրանսիական ներկայ մինիստրութեանը մասամբ աջողուել է այդ։ Եթէ կրկնաքուէարկութիւններն էլ աջող հետևանք կունենան չափաւոր հասարակապետականների համար, այն ժամանակ կարելի է յուսալ, որ Ֆրանսիայում վերջապէս կայուն մինիստրութիւն կազմուի և Կլիմանսոն՝ արմատականների պարագլուխը մինիստրութիւն տապալող՝ տիտղոսից տիպուի ձեռք քաշել։

—

ՓԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Գերմանական մի մանի լրագիրներ եննթադրութիւններ են անում, թէ դրաֆ Կալրիւհի իշխանութեան վախճանը մօտեցել է։ Կարծում են, որ նրա տեղը կըբռնէ ֆինանսների մինիստր Միքելը, որ վայելում է կայսրի համակրութիւնը։

—Զուրիխերիայում (Ցիւրիխ քաղաքում) կայանալիք սոցիալիստների կոնգրէսին կըմասնակցեն ուղարկուած պատգամաւորներ Անգլիայի, Գերմանիայի, Ամերիկայի սոցիալիստների կողմից։ Անգլիայից գալու են 54 պատգամաւորներ, Գերմանիայից 43, Ամերիկայից 30.

—Ֆրանսիայում վերջին ընտրութիւներին միջամտել են նաև հոգևորականները։ Մի քանի եպիսկոպոսներ հիմնուելով պապի առաջարկի վրայ՝ միանալ հասարակապետութեան, իսկ միւսները, ինչպէս օրինակ Օ-ի արքեպիսկոպոսը, ընդհակառակն, յորդորում է «աղնիւ» մարդկանց ձայն տալ, քանի որ պապը խորհուրդ է տալիս և ոչ թէ պատուիրում է միանալ հասարակապետութեան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Ամերիկայում սովորաբար էլեկտրականութիւնը, ջերմութիւնը, ջուրը, գազջուրը, նոյն իսկ կաթը բնակիչներին մատակարարելու համար կան զանազան ընկերութիւններ, որոնք թելերի կամ խողովակների միջոցով ցանկացողների բնակարանները միացնում են կեդրոնական կայանի հետ և այնտեղից ճամբում հարկաւորը։ Այժմ մի նոր ընկերութիւն էլ է երևան հկել, որը ամառուայ չորերին սառը օդ է ուղարկում ցանկացողների բնակարանները՝ խողովակների միջոցով։

*** Այզենախ (Գերմանիայում) քաղաքում սկսուել է մի կոնֆորենցիայի նիստերը, ուր քննուելու է ներկայ մարդկութիւնը բարոյապէս բարձրացնելու միջոցները։

*** Ունգարիայում Շենտ-Գատի հասարակութեան մէջ կազմուած է եղել կանանց մի ընկերութիւն, որի նպատակն է եղել իրենց ամուսիններին չխրող կանանց թոյն մատակարարել՝ ամուսիններին թունաւորելու համար։ Գործը քննութեան է յանձնուած։

*** Վիեննայի յայտնի դերձակ Գերման Յայտունգը սովորութիւն ունի իրբև ապրանք ճանապարհորդելու, այսինքն՝ նա մտնում է մի արկղի մէջ, արկղը կապուտում են, իբրև ապրանք յանձնում երկաթուղուն։ Մօտերքս նա միևնոյն կերպով ուզում էր Շիքագո գնալ, բայց Իլլինօյսում այդ իմանալով, նրան հանեցին արկղի միջից և բանտարկեցին։

*** Ունգարիայի Տորոնդոլեան չրջանի Զոմբոլի գիւղում անցեալները կատարել են մի մարդ ու կնկայ ամուսնութեան հարիւրամեակը։ Նրանք ամուսնացել են 1793 թուի մայիսին, ֆրանսիական տերրորի միջոցին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 10 օգոստոսի.—Այն յատուկ յանձնաժողովի, որ կազմուած է ներքին գործերը մինիսարութեան, զէմսկայի, քաղաքային ինքնավարութեան, կենդանաբոյծների և մասլահաթների ներկայացուցիչներից, անհրաժեշտ է համարում մսի դինը կանոնաւորելու համար մեծ քաղաքներում քաղաքային վարչութիւններին կից առանձին բիւրոներ հաստատել։ Տաւարի առևտրով պարապողները, առանց տաւարի դինը տեղում որոշելու, տաւարը երկաթուղով ուղարկում են այդ բիւրոները, իսկ այդ բիւրոներն էլ ամենայն օր աճուրդով պիտի ծախեն տաւարը և ստացուած փողը, բոլոր ծախսերը հանելուց յետոյ, պիտի վերադարձնեն տաւար ուղարկողներին։

ՎԻԼՆՈ.—Այսօր առաւօտեան ժամը 10-ին տեղս ժամանեցին Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչն ու Մեծ Իշխանուհի Ելիզաւետա Ֆէօդորովնան։

ՆԻԺՆԻՑ-ՆՈՎԳՈՐՈԴ. — Բարակ մառուզը վաճառեցին գարնանը Մոսկուայում վաճառուած գներով, թէև արտասահմանից բերուող ներկի թանկանալն ու ապրանքի մեծ պահանջն սպասել էր տալիս, թէ գներն աւելի կըլինեն. բերուած ապրանքն անցեալ տարուանից աւելի չէ։ Հարաւից և Վոլգայի չրջանի կողմից գնուած է 4 միլիոն արշինից աւելի, որը ազդեցութիւն կ'ունենայ բրդի առևտրի վրայ։ Բրդի առևտրի կենդանութիւնն օգոստոսի կիսից կըսկսուի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ.—«Нов. Вр.»-ը հաղորդում է, որ մաքսային տուրքերի դեպարտամենտը նոր կանոններ է մշակում մաքսատներում գործածուող ձևականութիւնները կրճատելու համար։

«Пет. Вѣд.»-ին հաղորդում է, որ

Ցոյս ունինք, որ սա չի չտապել եկու պատճառով, նայ՝ որ ինքը հիւան չէ և երկրորդ, որ դեռ նոր է ընտրուել ուխոդութեան թարմ ժամանակն է։ Մեր հին երևոխանի եկեղեցու տախտակամածն առանց կապալի տալու մասին չատ են խօսում. բանն էն է, որ խօսողների մէջ վարժապետներ էլ կան, մէկը հարցնող լինի էդ բարի պատուներին թէ, մէկն ու մէկիդ մօտ, օրինակ Թորոս վարժապետի մօտ որ մի երեխայ ընդեն կարդացնելու՝ նա կապ ծնողին, չէ, աղբէր, ես քանկ եմ կարդացնում, տար Թոմասի մօտ, որ էժան պրծնենս, իհարկէ ոչ։ Էգպէս չարունակ քանկը էժանի մօտ որ ուղարկելու լինի, վարժապետները հողը կըբերեն թէ իրենց և թէ ծնողի որդու գլխին։ Դոյն օրինակ պարապ խօսքերը հրբէք չուանի դնելու չեն, օրինակ քանի կոպէկ արժէք ունին այն վրայցնելը թէ՝ երեսփոխը 120 ր. է ծախսել մի ժամանակաւոր փայտայ վերելքի համար, որի վրայ բարձրանալով իշխանութեան պահանջմամբ թուղթ են կպցրել եկեղեցւոյ ճեղքուած պատին ատուգելու համար թէ ճեղքը հետզհետէ աւելանում է արդեօք, թէ նոյն դրութեան մէջ մնում, քանի որ, ասում են, բերդի մէջ կար երկաթեայ երկայն սանդուխք, որ եթէ խնդրեին՝ ձրի կ'ատանային թուղթը կըպցնելու համար, էլ չեն ասում, որ ուսուցչն տանից, փողն էլ տանից, էլ ուրիշի երախտեայ տակ մտնելու ինչ հարկ կար։ Այս համեստ երեսփոխը ուշադրութեան արժանի կողմեր չատ ունի, որոնցից մէկին էլ հենց այն է՝ որ իակի ուշադրութիւն չէ դարձնում ապերախտ խօսողների վրայ և ծիծաղելով հայրաբար ներում է տալայ են, թող խօսեն, ասելով։ Մեծ վեհանձնութիւն... անշուշտ չատ կապրի։ Նրա փայլուն գործունէութեան մասին, եթէ հարկը ստիպէ, կըրկին կըգառնանք այն միակ ցանկութեամբ, որ նրան հետևողների թիւը բազմապատկենք։

Այդպիսի հատընտիր երեսփոխ չունի Ալէքսանդրապոլը, Գ. Ս. ունէինք, որ թէև դարձեալ 9 տարի երեսփոխանութիւն արաւ, բայց նրա գործունէութեան հետ, խոստովանւում ենք, մտիկ ծանօթ չենք. թէ չէ՝ մանրամասն կըննարարդէինք, ցանկացողները սրա մասին լիակատար տեղեկութիւն ունենալու՝ թող գիմեն նրա հաչտեհաներին։

Հայելի սրբութից առ այժմ այսքան։
Պապիս Լոռը.

ԷՋՄԻԱԾԻՆ (Քղք. Հայելի)

—

Հայելի եղբայր, դիտէի, որ սկսած 1884 թուականից հրատարակւում ես Լոյս տեսածդ օրից դու միշտ արտափայլել ես իմ մէջ, չատ անգամ զովացել ինձնով, յաճախ մխիթարել եմ ես քեզ ու քո թղթակիցներին, ընթերցողներին ու համակրողներին։ Ես քո մեծ եղբայրդ, դու էլ գիտես, որ լոյս եմ տեսել քեզնից չատ առաջ, ոչ միայն քեզնից, այլ և չատ լրագրներից ու դրծողներից, 1847 թուի ծնունդ եմ, 46 տարեկան եմ ուրեմն. Ո՛ւմ յօբելեանն ասես, որ վերջին տարիներս չկատարուեց, իմ հայրենակիցները կենդանի մարդոց թողած՝ սկսեցին անգամ մեռելների մասին մտածել, անշուշտ չես մոռացել պէս պէս պատկերի պատմութիւնը մօտիկ անցեալում։ Ես չեմ գանգատւում, թէ ինչու իմ յօբելեանն էլ չկատարեցին, չեմ ուզում ու չեմ էլ սպասում, չնորհակալ եմ, իմ ցաւս ուրիշ ցաւ է, որ ստիպեց ինձ գրիչ վերցնել. լսիր, ինձ կամենում են կենդանւոյն թաղել ու փորձն արդէն սկսել են, թէև չատ չտեսան են տեսնում, բայց ահ ու սարսափից ինձ մօտ չեն գալիս, ինձ չեն ազատում, այ թէ՝ ինչից են եմ ես դանգատւում։ Ի՞նչ է իմ յանցանքը՝ չգիտեմ, թէ որ դու յանցանք ունիս սրա կամ նրա պատկերը արատցոլացնելով քո մէջ՝ ես էլ եմ ապա ուրեմն յանցաւոր, որ յանդգնել եմ երևցնելու իմ մէջ չրջապատիս ներկայ դրութիւնը իւր բոլոր գործիչներով։ Բայց չէ որ նոյնը անում էի ես իմ ծնած օրից ի վեր, քանի՛ քանի անգամ իմ չրջանակս երկար ու ձիգ ճմռիկը եմ զարթրած մի կարգ ապերախտների համար, որոնք այժմ կամենում են՝ ինձ կենդանի թաղել։ Ի՞նչ փոխանակութիւն, ի սէր Աստուծոյ յուսահատութիւնից քիչ է մնում թէ մեռնիմ, քանի՛ քանի չարախորհուրդ դէմքերի ու մտածութիւնների ականատես եմ եղած ես ու համբերութեամբ տարած ու մարսած։ Ինչպէս ապերախտ աշակերտն իւր բարերար ուսուցչի հետ է վարւում նրանից ոչ մի չնոր ընդունած չլինելը յայտարարելով ու նրա երախտիքը ոտքի տակ տալով՝ նոյնը այժմ ինձ հետ է պատահում։ Մի ճար, խնդրում եմ, անուշիկ եղբայր, վէրքս դարմանող չկայ այստեղ։ Կրտսեր եղբայր, դու ես մնացել, եթէ դու էլ դաւաճանեցիր և օգնութեան չհասար՝ կորած եմ անյետ։ Ամուր և հաստահիմն զագաղի մէջ են դնում ինձ, որ ծնող հօրս չիրմի քարայր տեսութիւնից զրկում, նրա անկած անտառի երեսը չտեսնեմ ու նրա հետ չհամբերութեամբ։ Հաւատա որ կըմեռնեմ կրտսեր եղբայր, չուտ արի, մի ճար, կորչում եմ։

Մեծ Հայելի։

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՑԵԼԻՒ.

Ալէքսանդրապոլ.—Պ. Հէյնէլ ծոռին.—Դուք հարցնում էք, ինչ անէք, որ կարճ միջոցի մէջ լաւ բանաստեղծ դառնաք։

Պատասխան.—Դրա համար երկու միջոց կայ 1) երկայն մազեր թողէք և 2) կարդացէք Աբրանապի «Սիրոյ զոհերը»։

Ալէք.—Մէյ խումբ օբլոբլներն ե էբլոեթլերներն Կարա-Մուրզայի հանբէյն եմբէց.—Դուք ասում էք, որ յօդուտ Կարա-Մուրզայի տուած անհամ երգը *) վերջացրիք և մինչև այժմ սպասում էք, որ պարոնը ըստ իւր խոստման՝ պատարագի արարողութիւնը սովորեցնէ։ Հարցնում էք մինչև ե՞րբ սպասէք։

Պատ.—Դրուստն ասացէք յարգելի օրիորդներ, եթէ Կարա-Մուրզայի տեղ մէկը ձեզ հրաւիրէր ոչ իւր զրպանի, այլ մի բարեգործական նպատակով տրուելիք ներկայացման մասնակցելու՝ էն ժամանակ միաբերան չէիք երգել «Նայ կու անիմ կու» երգը։ Ա՜խ, նեըեցէք, մոռացել էի, որ ի տրիտուր ձեր աշխատանաց՝ ամեն մէկդ մի-մի խըմբանկարի տէր դարձաք. ուրեմն իրաւունք ունէը Կարա-Մուրզան փախչելու, ինչպէս դուք էք ասում։ Պատարագի արարողութեան համար սպասեցէք մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը։

Ալէք.—Պ. Ո—ուչչ.—Դուք հարցնում էք, որ կազմարարին տաք ձեր զրքերը կազմելու։

Պատ.—Եթէ յիշողութիւնից թոյլ էք՝ և ուզում էք չուտ ստանալ, տուէք Սանոյեանցին, իսկ եթէ յիշողութիւնից սուր՝ Մալխասեանին, որովհետև կարող է պատահել, որ այս վերջինից 5 տարի յետոյ էլ կազմած զիրք չկարողանաք ստանալ, ուստի զրքերի անուններն ու թիւը չմոռանալու համար սուր յիշողութիւն է ունենալու։ Ով որ պահարան կամ տեղ չունի, բայց չատ գիրք ունի՝ նա էլ կարող է կազմելու պատրուակով ուղարկել բոլորը Մալխասեանի խանութը, որ ապահով և առանց կազմելու կըմնան նրանք՝ ինչքան որ տէրը ցանկանայ։

Ղևշաղ.—Այստեղ ասում են, որ ե-

*) Համերգը դասում անհամ երգ։
Մանօթ. գրաշարիս։

կող սեպտեմբերից մեր Հաւքհոյ դրպրոցն այլ ևս բացուելու չէ եկամուտ չունենալու պատճառաւ։ Ցոյսներս 30—40,000 դրամագլխի վրայ էր, բայց այդ փողերն էլ ասում են նամ գետնի տակ թաղած լինելով՝ մօտ ժամանակներս հանել էին ու թղթադրամները մէկ-մէկ փուել, որ չորանան, բայց թարսի պէս «աատանի» անուն պատանքամի բարձրանալով՝ բոլոր թղթադրամներն էլ երկինք են թռել ու անյետ կորել։

Պատ.—Մեր կողմից ոչ պատասխան և ոչ զարմացական նչան։ Ոչ հայկական՝ և ոչ եւրոպական՝ բայց և այնպէս պատշ կանչել տուէք։ Եթէ մի կորցրած էշի համար Ալէքսանդրապոլում պատշ կանչել տալու սովորութիւնը չէ վերջացել, հաչուեցէք թէ 30—40,000 ով քանի՛ էշ կարելի գնել, թէև կորած էշը ժուռար է մարսել, քան թէ պատրաստի փողը՝ գանողի համար։

Էջմիածին.—Հաստատ գալիս է։

Պատ.—Մի Միաբանին. ինչ թերահաւատ մարդիկ էք. էլի չէք հաւատում։

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՇԱՆՑ ՄԻ ՓՈՔՐԻԿ ԲԱՌԱՐԱՆ.

Արաբան=լուս,
Ալէքսանդրապոլ=հայ (կեղծաւոր)
Աչտարակ=հայհոյանք
Ախալցխա=ախ, ալ չկայ (բարոյականութիւն)
Անի=քանդի ու հանի.
Բորչալու=դող.
Բայազէտ=քուրդ.
Բագու=երկրպագու (նաւթի ու կրակի)
Գօրի=կորի (ըստ Ալիշանի)
Գանձակ=գանձակի (ֆուրգոնի)
Երևան=թուղք.
Ղարս=խարս—հարս.
Շամախի=փախի.
Վան=զաղթական.
Փօթի=փթի.
Թմբուլ=խաչագող.
Փայտջուկ=տես Թմբուլ.
Թափադոլակ *)=թափէն (գլուխը) դարդակ.

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԳԱՒՌՆԱԳԻՆ.

*) Ափսոս, որ Ա. Եղիկեանի Հայրենիքն է։ Մ. Հ. խմբ.

բժշկական դեպարտամինտը Միջին-Ասիա բժիշկներ է ուղարկում Ferula Gumbul բույսով խոլերա բժշկելու փորձեր անելու համար։ Այդ բույսից կայ նաև ուսւսաց Թուրքեստանում և գրգռող ու ջղաձգութեան հակառակ զօրութիւն ունի։

ՊԱՐԻԶ.—Հասարակապետական լրագիրները յայտնում են, որ ընտրութիւններն ալող հետևանք են ունեցել հասարակապետականների համար, իսկ պահպանողականների, մանաւանդ հասարակապետութեան չմիացողները, պարտութիւն են կրել։ «Ֆրանսիան, ասում է «Temps»-ը, օրըստկի յայտարարից, որ նա միատեսակ հաստատամտութեամբ երկու նպատակի է ձգտում՝ հասարակապետական հաստատուն և անկեղծ կառավարութիւն և ալող ու չափաւոր քաղաքականութիւն»։

Իտալական դեսպանը մինիստր նախագահի հետ տեսակցելով պաշտօնապէս ցաւակցութիւն յայտնեց Հռոմում և Միսսինայում կատարուած ցոյցերի առթիւ աւելացնելով, որ Հռոմի քաղաքապետը հրաժարեցրած է պաշտօնից։ Պարոն Ռիւդինի նոյնպէս ցաւակցութիւն յայտնեց Եգ-Մորտի դիպուածի առթիւ և ասաց, որ իտալացիներն են եղել խռովո թիւն պատճառ տուողը և յայտնեց, որ Եգ-Մորտի քաղաքապետը իր պաշտօնից արձակուած է։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Խմբագիր Տէր

Ձեր պատուական լրագրոյն ապրիլ հինգ թուոյն մէջ եղած անանուն յօդուածն ժամանակին կարդացած և հարկ եղածն պատասխանած. ահա այսօր ևս մայիս 15 և յունիս 8 թուներն ձեռքս հասած կարդացած զարմացած և արդար զայրոյթ մը զգացած եմ։

Ձեր անկողմնակալութեան վրայ վըստահացած, կուգամ խնդրել՝ որ այս իմ տողեր համէք հիւրասիրել։

Աչխարհիս վրայ ապերախտութենէ զազրալի բան մը չկայ. այդ ծաղրածութիւններ, անզօր ու չնչին համարած քաղաքագործութիւններ ինչու արդեօք ուրիշներու վրայ չենք տեսներ, այդ պաշտօնին դժուարատար դեկն որու կուզէք յանձնել, խնդրեմ ըսէք առանց քաշուելու, ծուռ ու մուռ ճամբաներու մէջ խարխափելու ինչ հարկ կայ, ա՛ն արդէն հրաժարականը կուտայ, բայց ժողովուրդը արդեօք հանդարտ պիտի մնայ բնաւ չեմ յուսար։

Անանուն յօդուածագիրը՝ անչուշտ լըսեցիր իմ հոս գալս, եօթ թաղն մի տեղ (Սուխննց) հաւաքելս, եկեղեցականներէ և ժողովրդներէ խառն ժողով*) մը կազմելս և հոն անպատճառ ոգւով և անկողմնակալ սրտով, ազատ լեզուով խոսելս, անչուշտ առիթ ձեզմէ և մրմունջս, գիտցար, տեղեկացար, քիչ չատ ճանչցար, անկախ սրտի և ազատ մտքի տէր ըլլալս, իմացար և հասկցար, որով ինծի մի քիչ ազատ խոսիմ։

Ուր էին այն հակառակորդներ, ուր էին այն չուզող կզերներ, ուր էին այդ լուսաւորեալ խոհարչուրցիներ և վարդապետներ, երբ գեր. Տէր-Կարապետ Չախալեան ժողովրդին մէջ այդ եօթ թաղին առջև կըսէր «Ահա ես այսօրէն իմ հրաժարականս կուտամ, ինչպէս որ արդէն տուած եմ, ես միայն ձեր միութիւնը կուզեմ, ալ բաւ է քիչ մալ այս փառք Աստուծոյ ուրիշն վայլէ։ Եւ այս խօսքերուն դէմ ժողովուրդն ինչ կըսատասխանէր։

Մենք երկնքէն մինչի գետին գոհ ենք և միշտ երախտագէտ և բնաւ գանգատ մը չունինք, 700 կարմեաը տուն է Խոտորջուր մոխրակոյտ հարիւր չեմ կըրնար ըսել, վոր աւելի քիչ են միայն Ըսանն միւտերութեան խնդիրն է. իսկ վեց հարիւրը կրկին յայտնեցին թէ ոչ միւտիրներէս ալ գոհ, չնորհակալ և ասկէ չատ ուրիշ մը չեմք ընդունիլ։ Ուրիմն ամեն ինչ լմնցած է, խռովութիւնը վերջացած է, եղբայրական կապերն հաստատուած է, ձեռք ձեռքի տալ պէտք է։ Սակայն այս ալ մոռանալու չէ. ինչպէս ըսի հարիւրը միայն չի ուզէր. և յանցանք մալ չեն կրնար գըտնել, եկուր տես որ նա արդէն չի ընդունէ ինձ միւտերութիւն պէտք չէ քանիցս ըսած է. բայց հարիւր տան բողոքն որ տկարներս սարսափ կուտայ, հապա վեց հարիւր տան բողոքն որչափ բարձր պիտի ըլլայ և ալ առաջըն չի առնուիր, այս առթիւ մնացած է, հոս խնդիրը լուծուած է։

Աչխարհի վրայ ինձ համար պատուէս բարձր բան չկայ, և ես կերդնում պատուոյս վրայ. je donne ma parole d'honneus la plus saerè որ այս խօսքերուս մէջ բառ մը ուել չի կայ, եօթ թաղ մէկ տեղ է վկայ։

Այն որ իր ազգ կ'ամպատուէ, արդէն ինքնին անպատիւ է, այն որ իր ազգը չի սիրէ, մարդ ըսուելու արժանի չէ, իմ միակ նպատակս ազգիս օգտակար ըլլալն է և այս լեզուս չէ որ կ'ըսէ, այլ սիրտս և ինչ հարկ գործքը պիտի ցուցնէ, Auxgrands hommes la patrie raiconnaissaute!!!

Կրթութեան ոգին ժողովրդեան մը յաջողութեան, առաջադիմութեան ու հարստութեան անպատճառ աղբիւրն է։

Եւ ես տեղս դպրոցի մը անհրաժեշտ պէտքը զգացի, յատակագիծ մը չինեցի, որ մեր թերթերուն մէջ պիտի կարդացուի, միտքս յայտնեցի, գոհունակութեան, ուրախութեան, երջանկութեան, ներդաշնակութեան ձայներ լսեցի, ընդհանրութեան վրայ խնդով մը հրճուանք մը կերևի։

Այդ լուսաւորութիւն, դպրոց, ուսում, գիտութիւն, դպրութիւն բուռացողներու-բուչայողներու ձայները հոս կը նուազի։ Կրթութեան գործին նայիս ով պիտի աջակցի. քիչ օրէն յայտնի կըլինի և ըսածներս պիտի հաստատուի։

Սատարգրութիւն մը պէտք է համարձակ դնել և ըսել տես՝ ինձ Ձեզի պէս չեմ պահուըտիր։

Վ. Ի. Շապանեանց.

Խոտորջուր *) Սուննց,
25 յունիս, 1893 թ.

Խմբ.

*) Սիւննաց երկրէն գաղթած են. Խոտորջուրի ամբողջ տեղեկագիրը կըգրեմ, եթէ ուզէք կըղրկեմ, երկիրը, դերը, աւոլորութիւնները, բնակութիւնները և այլն և այլն։

Երկաթուղի



Թիֆլիսից Բաթում է գնում մարդատար № 2 գնացքը առաւօտեան 9 ժ. 30 ր., և Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր.։

Թիֆլիսից Բաթում է գնում № 4 պոստային գնացքը, երեկոյեան 6 ժ. 50 ր., և Բաթում է հասնում առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

Թիֆլիսից Բագու է գնում պոստային № 3 գնացքը՝ ցերեկը ժամը 1-ից 20 ր. անց։

Բաթումից դուրս է գալիս մարդատար № 1 գնացքը առաւօտեան 9 ժ. 45 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում երեկոյեան ժամը 9-ից 52 ր. անց։

Բաթումից դուրս է գալիս պոստային № 3 գնացքը գիշերուայ ժամը 11-ից 25 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում ցերեկը ժամը 12-ին 25 ր. անց։

Բագուից պոստային № 4 գնացքը դուրս է գալիս գիշերուայ ժամը 11-ից 10 ր. անց և Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 5-ից 50 ր. անց։

ԱՄԱՐԱՆՈՑԱՑԻՆ ԳՆԱՑՔ

Թիֆլիսից Միխայլովո գնում է № 24 գնացքը հայից չետոյ ժամը 3-ին։

Միխայլովից Թիֆլիս է գալիս առաւօտեան ժամը 8-ից 10 րոպէ անց։

Թիֆլիսից Դանծակ գնում է № 47 գնացքը երեկոյեան ժամը 9-ից 20 րոպէ անց։

Դանծակից Թիֆլիս է գալիս № 48 գնացքը ցերեկը ժամը 1-ից 30 րոպէ անց։

Պատահական կատարեալ

Երթեւեկութիւնը Թիֆլիսի եւ Վլադիկաւկազի միջեւ մայիսի 1-ից սկսած մինչեւ նոյեմբ. 1-ը։

ԹԻՖԼԻՍԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Գուդաուրում և միւս օրը երեկոյեան ժամը 10-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 3-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուսը). առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 5-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Վլադիկաւկազ։

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Գուդաուրում և միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 3-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 5-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 8½-ին հասնում է Թիֆլիս։

Հոդեւոր



Երթեւեկութիւնը մայիսի 8-ից սկսած.

ԱՊՐԱՆՔԱԿԻՐ ՄԱՐԴԱՏԱՐ ԳԻՆ

Բաթումից գնում է ուրբաթ օրերը երեկոյեան ժամը 6-ին և հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Բաթում գալիս է հինգշաբթի օրերը, կէս օրուայ մօտերքը։

Փոթից գնում է Օդեսա՝ ուրբաթ օրերը գործերը վերջացնելուց յետոյ։

Փոթից գնում է Բաթում՝ հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 9-ին։

Փոթի գալիս է՝ երեքշաբթի օրերը ցերեկը՝ Օդեսայից։

Ապրանքակիր-մարդատար շոգենաւերում ընդունուող II և III կարգի ճանապարհորդները կեպակիզէն չեն տանում։

—

ԲԱԹՈՒՄԻՑ դուրս է գալիս դէպի ՕԴԵՍՍԱ

Շաբաթ օրը՝ լոյս կիրակի, ժամը 2-ին, ընդհանուր ընթացքով մանում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրը՝ գիշերուայ 11½-ին, ճանապարհ նաւը և մանում է միայն Նալթա և Սևաստոպոլ։

Երեքշաբթի օրը՝ գիշերուայ ժամը 2-ին, ընդհանուր ընթացքով, մանում է բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, ուղիղ գծով, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

Երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ն, դուրս է գնում դէպի Կ. Պոլիս՝ երկու շաբաթը մի անգամ։

ՕԴԵՍՍԱՑԻՑ գալիս է ԲԱԹՈՒՄ

Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, ընդհանուր ընթացքով, բոլոր նաւահանգիստներն է մանում։

Ուրբաթ օրերը՝ առաւօտեան, Ճեպընթաց, Նալթա և Սևաստոպոլ հանդիպելով։

Երկուշաբթի երեկոյեան, ընդհանուր ընթացքով, մանում է բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի սուրբ ԳԱՅԵԱՆՆԵԱՆ Հայ օրիորդաց երկդասեան գպրոցի խնամակալութիւնը յայտնում է ի լուր Հայ Հասարակութեան, որ նրա խնամքին յանձնուած գպրոցում աշակերտուհիների ընդունելութիւնը կ'սկսուի օգոստոսի 20-ից, իսկ վերաքննութիւնները՝ նոյն ամսի 24-ից։

(469) 4—2.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՐԳԻ

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

որ աւարտել է Գորուայ ուսուցչական գպրոցը, ցանկանում է Հայոց ուսումնարաններում տեղ ունենալ. Հասցէն՝ Баку, Бабаляицу, Телеграфъ.

(470) 5—2.

ԵՐԵՔ ԱՄՍՈՒԱՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ

սովորեցնում եմ շրջագգեստի ձեւագիտութիւնը՝ կարել իմացողներին միայն 10 րուբլով, իսկ կարել չիմացողներին 15 րուբլով։

Տղի շորի ձեւագիտութիւնն էլ սովորելու համար պէտք է վճարել այլ և 5 րուբլի։

Հասցէն՝ — երկրորդ Կիրպիչնայա փողոց, տուն Ալաերովիչի № 3.

(405) 10—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նագորնայա փողոց, № 9)

Ցանկացողք ունենալ իրենց առևտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքն աւարտած Ա.ՇԱ.ԿԵՐՏՆԵՐ ԵԻ Ա.ՇԱ.ԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

Ընդունելութիւնները սկսուելու են սեպտեմբերի 1-ից։ Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովինովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտար քաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П. Мануэлянцу.

444) 12—6

ԱՋԴ

Բարելիշատակ ՅՈՎՍԷՓ ԻԶՄԻՐԵԱՆՑԻ կտակին տրամադրութեան համաձայն՝ Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յունուար տօնի Սրբոց Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ։

Հետևապէս՝ այն ամեն հեղինակք ու բանասէրք որ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ ո և է երկասիրութեամբ կը փափաքին մասնակցել այս մրցանակաբաշխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ տարւոյ Յունվարի սկիզբն յուղարկել առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն ի Կ. Պոլիս իրենց աշխատասիրութիւնները։

Տալագրեալ երկասիրութիւնք երեք օրինակ պէտք է յուղարկուին. իսկ ձեռագիրք մի օրինակ՝ որք ետ չեն տրուիր։

(կնիք)

Պատրիարքարան Հայոց Կ. Պոլսոյ
№ 754 25 յունիս 1893. 10—9

ԿԵՆԱՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Պետերբուրգ Նևսկի պր. №3

Ռուսիայում ընկերութիւնը իրաւունք ունի գործել 1889 թ. յունիսի 2-ին։

Ընկերութեան գործունէութեան վրայ կառավարական մշտական իրական հսկողութիւն է նշանակուած։ ՈՒՐՔԷՆ ընկերութիւնը 1890 թուին Ֆրանսիայում և Եւրոպայի միւս պետութիւնների մէջ 50,000,000 ֆրանկի ապահովութիւն է արել

ՈՒՐԲԵՆ (L'URBAINE)

Սգուտին մասնակցելու փոխարէն «Ուրբէն» ընկերութիւնը ոչ մի ընթացիկ պրեմիա չէ վերցնում կեանքն ապահովուղի հիւանդութեան դէպքում և, չնայելով դրան պոլիսը պահում է իւր ոյժը։

Գլխաւոր ներկայացուցիչ, Անդրկովկասի, Անդրկասպեան և Թուրքեստանի երկրների, նոյնպէս և Բուխարայի համար է՝ Պոլակ և Ընկ. առևտրական տունը Թիֆլիսում, Վ. Ելիսավետինովսկայա փողոց, տուն № 10, III պիմնազիոնի հանդէպ։ Գլխաւոր վերատեսուչն է ՄԻԽԱՑԵԼ ՕՍԻՊՈՎԻՉ ՉԻՉԻԿՆ։ Կանոնադրութիւնը և զանազան բացատրութիւններ կարելի է ստանալ Բաթումում, Բագուում, Սամարղանդում—Պոլակ և Ընկ. գրասենեակներում և ընկերութեան բոլոր գործակալութիւններից։

26—22

*) Եթէ հնարաւոր է, որ այդպիսի մի ժողով է գումարուել և ժողովում մեծամասնութիւնը Չախալեանի համակիրը է դտնուել, դա դեռ ևս ապացոյց չէ հայր Չախալեանի արդարութեան։ Ով որ ծանօթ է առհասարակ մեր հասարակ դասակարգի ժողովներին, նա գիտէ, թէ ինչ է նշանակում ժողով կազմել և այն էլ գօրեղ, դիրք ունեցող անձերի ձեռնհասկցութեամբ։

Դոз. Цензурою Тифлисъ, 11-го Августа 1893 г. Տպարան և Վ.իմպ. Ա. Մելիք-Շահնազարեանցի. Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы.